ՀԱՍՏԱՏՎԱԾ է

«Ինտերնետ միություն»

հասարակական կազմակերպության

ընդհանուր ժողովի որոշմամբ

«17» մարտի 2009թ.

նախագահ Իգոր Մկրտումյան

ՏՊԱԳՐՎԱԾ Է ՉՈՐՍ ՕՐԻՆԱԿԻՑ

ՕՐԻՆԱԿ 1

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ արդարադատության նախարարության

կոլեգիայի 31.08.1994թ. թիվ 52/1-7 որոշմամբ

վերագրանցված է ՀՀ արդարադատության

նախարարի 21.01.2000թ. թիվ 150 հրամանով

Նոր խմբագրությամբ կանոնադրությունը

գրանցված է

ՀՀ Իրավաբանական անձանց պետական

ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից

«30» 03 2009թ.

Գրանցման N 211.171.05016

Վկայականի N 034 084495

Պետական ռեգիստրի ղեկավար՝

Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«ԻՆՏԵՐՆԵՏ ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆ»

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

(նոր խմբագրություն)

2009թ.-Երևան

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 **«Ինտեռնետ հանրություն» հասարակական կազմակերպությունը** /այսուհետ՝ կազմակերպություն/ անձանց շահերի ընդհանրության հիման վրա, ոչ կրոնական հոգևոր և ոչ նյութական այլ պահանջմունքներ բավարարելու նպատակով ստեղծված կամավոր հասարակական միավորում է:

1.2Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության հիման վրա:

1.3Կազմակերպության գործունեության սկզբունքներն են օրինականությունը, կամավորությունը, իրավահավասարությունը, ինքնակառավարումը և հրապարակայնությունը:

1.4Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

1.5Կազմակերպության հայերեն լրիվ անվանումն է՝ **«Ինտերնետ հանրություն»** հասարակական կազմակերպություն:

1.6Կազմակերպության ռուսերեն լրիվ անվանումն է՝ Общественная организация „Общество интернет„.

1.7Կազմակերպության անգլերեն լրիվ անվանումն է՝ „Internet society„ non-governmental organization.

1.8 Կազմակերպության իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, Նիկոլ Դուման 62/1, թիվ 1:

2.ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ (ԱՌԱՐԿԱՆ) ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1Կազմակերպության գործունեության հիմնական նպատակն է Հայաստանի Ինտերնետ գլոբալ հեռակապի օգտագործողների գործունեությանը օժանդակումը:

2.2 Կազմակերպության խնդիրները՝

Կազմակերպության նպատակների իրականացման համար կազմակերպությունը՝

- մշակում և իրականացնում է կազմակերպչական, կրթական, գիտահետազոտական, բարեգործական և այլ ծրագրեր,
- կազմակերպում է գիտաժողովներ, սեմինարներ, հասարակական քննարկումներ և նման այլ միջոցառումներ,
- համագործակցում է ՀՀ պետական մարմինների և հաստատությունների հետ,
- անմիջական կապեր է հաստատում ՀՀ, միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների հետ, մասնակցում է համատեղ ծրագրերին, անդամակցում է միջազգային ոչ կառավարական կազմակերպություններին,
- իրականացնում է իր կանոնադրության նպատակներից բխող այլ գործունեություն,
- զարգացնում է Ինտենետի տեխնոլոգիաները և այն մատչելի դարձնում Հայաստանում,
- աջակցում է Հայաստանի ինտերնետ օգտագործողների գործունեությունը,
- տարածում է Ինտերնետի ստանդարտները և տեխնոլոգիաները:

2.3 Կազմակերպության նպատակն է նաև միավորելով իր անդամների պոտենցիալ հնարավորությունները ծառայել հանրությանը հետևյալ կերպ.

- օժանդակել Ինտերնետի Հայաստանի ենթացանցի զարգացման նախագծերի մշակմանը,
- օժանդակել Ինտերնետի Հայաստանի ենթացանցի ղեկավարմանը,
- օժանդակել Ինտերնետի Հայաստանի տիրույթի նոր անդամների ընդունմանը և նրանց ենթատիրույթների գրանցմանը,
- օժանդակել Հայաստանի Ինտերնետ ենթացանցի տեղեկատվական կենտրոնի աշխատանքներին,
- օժանդակել ինտերնետի Հայաստանի տիրույթի տվյալների բազայի մշակմանը,
- օժանդակել Հայկական Ինտերնետ տիրույթի ենթատիրույթների անվանումների մշակման քաղաքականությանը,

- աջակցել Հայաստանի Ինտերնետ ենթացանցի զարգացմանը,
- գործուղել կազմակերպության անդամներին միջազգային Ինտերնետ միության սեմինարներին և կոնֆերանսներին,
- մեթոդական և կազմակերպչական օգնությամբ օժանդակել լայն հասարակությանը,
- օրենքով սահմանված կարգով իրականացնել ուսուցում՝ Ինտերնետի և ցանցերի ասպարեզում,
- հովանավորչական միջոցներ հայթայթել և օգտագործել դրանք Ինտերնետի Հայկական ենթացանցի առաջնահերթ խնդիրների լուծման համար,
- բարձրացնել կազմակերպության անդամների որակավորումը, ընդլայնել և խորացնել նրանց մասնագիտական գիտելիքները :

2.4 Կազմակերպությունն իրականացնում է նաև ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ ծրագրեր :

2.5 Իր խնդիրների և նպատակների իրականացման համար Կազմակերպությունը ձեռնարկում է հետևյալ միջոցառումները.

ա/պարբերաբար գիտաժողովներ ու կոնֆերանսներ է կազմակերպում համանման բնագավառի կազմակերպությունների հետ,

բ/կազմակերպում և օրենքով սահմանված կարգով անց է կացնում դասընթացներ, դասախոսություններ, բանավեճեր մասնագիտական հարցերի շուրջ,

գ/պաշտպանում է իր անդամների միասնական շահերը,

դ/ հաստատում և խորացնում է կապերը ՀՀ և օտարերկրյա պետությունների և կազմակերպությունների հետ:

3 .ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԴԱՄԱԳՐՎԵԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1Կազմակերպության անդամ կարող է դառնալ Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև օտարերկրյա ցանկացած քաղաքացի և քաղաքացիություն չունեցող անձ, ով ցանկանում է մասնակցել նրա գործունեությանը և ընդունում է Կազմակերպության կանոնադրությունը :

3.2Կազմակերպության անդամ դառնալու ցանկություն ունեցող անձը գրավոր դիմում է Կազմակերպության վարչությանը (այսուհետև՝ Վարչություն):

3.3Կազմակերպության անդամության մեջ ընդունելու հարցը լուծում է Վարչությունը:

3.4Կազմակերպությանն անդամագրված անձն ազատ է դուրս գալու Կազմակերպությունից: Կազմակերպության անդամությունից զրկումը տեղի է ունենում Վարչության որոշմամբ:

3.5Կազմակերպության այն անդամը, որը Վարչության կողմից սահմանված լինելու դեպքում վեց ամիս անընդմեջ չի վճարում անդամավճար, կամ պարբերաբար խախտում է սույն կանոնադրությունը, Վարչության որոշմամբ զրկվում է անդամությունից: Վերստին նրա անդամագրումը կատարվում է ընդհանուր հիմունքներով:

4.ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1Կազմակերպության անդամն իրավունք ունի՝

ա/ ընտրել և ընտրվել Կազմակերպության բարձրագույն և այլ մարմիններում, ընդ որում, ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմիններում կարող է ընտրվել 18 տարին լրացած անձը.

բ/ Կազմակերպության աշխատանքները բարելավելու նպատակով նրա ղեկավար մարմիններին ներկայացնել դիմումներ, առաջարկություններ և բողոքներ.

գ/ սպառիչ տեղեկատվություն ստանալ Կազմակերպության գործունեության մասին.

դ/ ազատ դուրս գալ Կազմակերպությունից.

ե/ Կազմակերպությունից ստանալ իրավական օգնություն՝ ուղղված իր օրինական շահերի պաշտպանությանը.

զ/ մասնակցել Կազմակերպության կողմից կազմակերպված միջոցառումներին.

է/ Կազմակերպության նախագահի և Վարչության ոչ կանոնադրական գործունեության դեմ բողոքարկել ժողովին կամ դատարան՝ օրենքով սահմանված կարգով:

4.2Կազմակերպության անդամը պարտավոր է՝

ա/ հոգ տանել Կազմակերպության հեղինակության մասին.

բ/ կատարել Կազմակերպության կանոնադրության պահանջները, ղեկավար մարմինների որոշումները.

գ/ մուծել մուտքի վճար և ամսական անդամավճար՝ Վարչության կողմից սահմանված լինելու դեպքում, որոնց չափն ու վճարման կարգը սահմանում է Վարչությունը.

դ/ բարեխղճորեն կատարել իր վրա դրված պարտականությունները.

4.3Կազմակերպության կանոնադրությունը խախտող կամ իր պարտականությունները չկատարող անդամի նկատմամբ Կազմակերպության ժողովի կամ Վարչության կողմից կարող են կիրառվել կարգապահական տույժի միջոցներ՝ նկատողություն, Կազմակերպության անդամությունից զրկում:

5.ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

5.1Կազմակերպությունը հանդիսանում է իրավաբանական անձ՝ պետական գրանցման պահից:

5.2Կազմակերպությունն ունի առանձնացված գույք, ինքնուրույն հաշվեկշիռ, հայերեն, ռուսերեն, անգլերեն անվանումներով կլոր կնիք, դրոշմ, հաշվարկային հաշիվ բանկում՝ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա արժույթով, իր անունից կարող է ձեռք բերել գույքային և ոչ գույքային իրավունքներ և կրել պարտականություններ, որպես հայցվոր և պատասխանող հանդես գալ դատարանում: Կարող է ունենալ իր խորհրդանիշը:

5.3Կազմակերպությունն ինքնուրույն է որոշում իր կազմակերպական կառուցվածքը, խնդիրները, նպատակները և գործունեության ձևերը:

5.4Կազմակերպությունն իր կանոնադրությամբ նախատեսված նպատակները և խնդիրներն իրականացնելու համար, օրենքով սահմանված կարգով իրավունք ունի՝

ա/ տեղեկատվություն տարածել իր գործունեության մասին.

բ/ հիմնադրել լրատվության միջոցներ.

գ/ կազմակերպել խաղաղ, առանց զենքի ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր.

դ/ ներկայացնել և պաշտպանել իր անդամների իրավունքները և օրինական շահերը այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում.

ե/ իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն՝ իր կողմից հիմնադրված տնտեսական ընկերությունների միջոցով.

զ/ օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռք բերել, վարձակալել և օգտագործել անշարժ գույք, տրանսպորտային միջոցներ, օրենքով չարգելված այլ գույք.

է/ օտարել կամ վարձակալության կամ անվճար օգտագործման հանձնել Կազմակերպությանը պատկանող ցանկացած անշարժ և շարժական գույք.

ը/ կնքել օրենսդրությամբ չարգելված պայմանագրեր և այլ գործարքներ.

թ/ ինքնուրույն կազմավորել և տնօրինել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում՝ փոխառու միջոցների ներգրավմամբ, Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում ստանալ վարկեր, դրամաշնորհներ, այդ թվում՝ արտարժույթով.

ժ/ իրականացնել ինքնուրույն արտաքին գործունեություն, այդ թվում՝ կնքել համաձայնագրեր օտարերկրյա ոչ առևտրային և ոչ կառավարական կազմակերպությունների հետ, անդամակցել միջազգային հասարակական կազմակերպություններին, իր անդամներին և այլ անձանց գործուղել արտասահմանյան երկրներ, հրավիրել այլ երկրներից քաղաքացիներ, ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

6.ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6.1Կազմակերպությունը պարտավոր է՝

ա/ ցանկացած ֆիզիկական անձի պահանջով յոթ օրացուցային օրվա ընթացքում նրան հնարավորություն տալ ծանոթանալու կազմակերպության կանոնադրությանը.

բ/օրենքով սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական հաշվառում

գ/ իր գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունները ներկայացնել կազմակերպության ժողովի հաստատմանը ոչ պակաս, քան երկու տարին մեկ անգամ՝ապահովելով այդ հաշվետվությունների հրապարակայնորեն մատչելի լինելը.

դ/ պետական կառավարման լիազորված մարմնի պահանջով նրան տրամադրել իր բարձրագույն և այլ մարմինների որոշումների պատճենները, Կազմակերպության գործունեության մասին այլ փաստաթղթեր, թույլատրել այդ մարմինների ներկայացուցիչներին ներկա գտնվել Կազմակերպության ժողովին.

ե/ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով տեղեկատվություն ու հաշվետվություններ ներկայացնել պետական մարմիններին.

զ/ առանձնացված ստորաբաժանում կամ հիմնարկ ստեղծելու և կազմալուծելու մասին որոշումներ ընդունելուց հետո՝ մեկ ամսյա ժամկետում դիմել պետական գրանցման մարմին, սահմանված կարգով դրանք հաշվառելու և հաշվառումից հանելու համար.

է/ վարել իր անդամների հաշվառումը.

ը/առանց լիազորագրի կազմակերպությունը ներկայացնելու իրավունք ունեցող պաշտոնատար անձի և (կամ) կազմակերպության գտնվելու վայրի հասցեի փոփոխման դեպքում, 14 օրացույցային օրվա ընթացքում պետական գրանցման մարմին ուղարկել այդ անձի անձնագրային տվյալները և (կամ) Կազմակերպության գտնվելու վայրի հասցեի մասին տվյալներ:

7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1Կազմակերպության գործունեության և կառավարման ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը պատկանում է Կազմակերպության բարձրագույն մարմնին՝ ժողովին:

7.2Ժողովը հրավիրվում է երկու տարին մեկ անգամ: Ժողովը հրավիրում, դրա անցկացման կարգն ու ժամկետները որոշում է Վարչությունը: Եթե Կազմակերպության անդամների թվաքանակը անցնում է հարյուրի սահմանը, ապա Վարչության կողմից սահմանված կարգով ժողովին կարող են մասնակցել անդամների կողմից ընտրված ներկայացուցչական պատվիրակները:

Կազմակերպության արտահերթ Ժողով հրավիրվում է Կազմակերպության անդամների մեկ երրորդի կամ Կազմակերպության վերահսկիչ հանձնաժողովի (վերահսկիչի) պատճառաբանված պահանջով՝ Վարչության կողմից՝ պահանջող կողմի հաստատած օրակարգով՝ ոչ ուշ, քան 14 օրացույցային օրվա ընթացքում:

7.3 Ժողովի բացառիկ իրավասության հարցերն են՝

ա/ Կազմակերպության կանոնադրության հաստատումը և փոփոխումը.

բ/ Կազմակերպության ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմինների ընտրությունը, կազմի փոփոխումը

գ/ Կազմակերպության լուծարման և վերակազմակերպման մասին որոշումների ընդունումը.

դ/ Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունների հաստատումը:

7.4 Ժողովը կարող է հարցեր քննարկել և որոշումներ ընդունել, եթե նրան մասնակցում են Կազմակերպության բոլոր անդամների, կամ պատվիրակների կեսից ավելին: Հարցերի քննարկման ժամանակ որոշումներն ընդունվում են բոլոր անդամների կամ պատվիրակների ձայների պարզ մեծամասնությամբ:

7.5 Վարչությունն ընտրվում է Ժողովի կողմից երկու տարի ժամանակով:

Վարչությունն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի ձևով, որոնք հրավիրվում են Կազմակերպության նախագահի կողմից ոչ ուշ, քան վեց ամիսը մեկ անգամ: Վարչության նիստ կարող է հրավիրվել նաև Կազմակերպության անդամների 20%-ի, Վարչության անդամների կամ Կազմակերպության վերահսկիչ հանձնաժողովի (վերահսկիչի) պահանջով:

7.6 Վարչությունը՝

ա/ հաստատում է Կազմակերպության նախագահի հաշվետվությունները, այդ թվում՝ Ժողովին ներկայացվող հաշվետվությունը.

բ/ առաջարկություններ է ներկայացնում Ժողովին՝ նրա բացառիկ իրավասությանը վերաբերող հարցերի վերաբերյալ.

գ/ ընդունում է Կազմակերպության անդամ և ազատում կամ զրկում անդամությունից.

դ/ Կազմակերպության անդամների նկատմամբ կիրառում է խրախուսանքներ և տույժի միջոցներ.

ե/ ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը՝ ժողովների միջև ընկած ժամանակաշրջանում.

զ/ սահմանում է Կազմակերպության անդամների կողմից մուտքի վճարի և անդամավճարի մուծման կարգը, չափերը և ձևերը.

է/ ձեռք է բերում, տիրապետում, օգտագործում, տնօրինում, օտարում և դուրս գրում Կազմակերպության՝ մեկ միլիոն դրամը գերազանցող արժողությամբ գույքը.

ը/ ստեղծում և լուծարում է Կազմակերպության հիմնարկները, կառուցվածքային ստորաբաժանումները, առանձնացված ստորաբաժանումները /մասնաճյուղեր, ներկայացուցչություններ/, ինչպես նաև հաստատում է նրանց կանոնադրությունները.

թ/ հաստատում է Կազմակերպության աշխատակազմի հաստիքացուցակը, աշխատողների վարձատրության կարգն ու չափերը.

ժ/ սահմանում է Կազմակերպության ղեկավար մարմիններում ընդգրկված անձանց վարձատրության կարգը և չափը,

ժա/ հաստատում է Կազմակերպության հաշվապահական հաշվառման հաշվետվությունները.

ժբ/ իրավունք ունի քննարկել և լուծել Կազմակերպության գործունեությանն ու կառավարմանն առնչվող ցանկացած հարց, բացառությամբ Ժողովի բացառիկ իրավասությանը վերապահվածներից:

7.7 Վարչությունը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե նրան մասնակցում են իր անդամների երկու երրորդից ավելին:

Վարչության որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ:

Ձայների հավասարության դեպքում նախագահի ձայնը վճռորոշ է:

7.8 Կազմակերպության նախագահն ընտրվում է Ժողովի կողմից 2 տարի ժամանակով:

7.9 Կազմակերպության նախագահը՝

- ղեկավարում է Վարչության աշխատանքները և վարում է նրա նիստերը.
- ներկայացնում է Կազմակերպությունն առանց լիազորագրի.
- արձակում է հրամաններ, տալիս է լիազորագրեր.
- օրենքով սահմանված կարգով կնքում է գործարքներ, ստորագրում է պայմանագրեր, ֆինանսական փաստաթղթեր, բացում բանկային հաշիվներ.
- Վարչության հաստատմանն է ներկայացնում աշխատակազմի հաստիքացուցակը:
- ձեռք է բերում, տիրապետում, օգտագործում, տնօրինում, օտարում և դուրս գրում Կազմակերպության՝ մինչև մեկ միլիոն դրամ արժողության գույքը:

Կազմակերպության գործադիր տնօրենը նշանակվում է Կազմակերպության վարչության կողմից, որը պատասխանատու է Կազմակերպության ֆինանսական գործունեության համար: Տնօրենի իրավունքները և պարտականությունները սահմանվում են առանձին պայմանագրով:Ֆինանսական խախտումների համար Կազմակերպության տնօրենը կրում է անձնական պատասխանատվություն:

Կազմակերպության փոխնախագահն/փոխնախագահներ/ ընտրվում է ժողովի կողմից 2 տարի ժամանակով և փոխարինում է կազմակերպության նախագահին վերջինիս բացակայության ժամանակ:

7.10 Կազմակերպության վերահսկիչ հանձնաժողովը (վերահսկիչը) ընտրվում է Ժողովի կողմից 2 տարի ժամանակով: Վարչության անդամները և Կազմակերպության նախագահը չեն կարող լինել Վերահսկիչ հանձնաժողովի անդամներ:

7.11 Վերահսկիչ հանձնաժողովն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի ձևով, որոնք հրավիրվում են տարեկան առնվազն 2 անգամ: Նիստ կարող է հրավիրվել նաև Կազմակերպության անդամների 20%-ի, հանձնաժողովի անդամների մեկ երրորդի, Կազմակերպության նախագահի կամ Վարչության պահանջով:

7.12 Կազմակերպության վերահսկիչ հանձնաժողովը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե նիստին մասնակցում են հանձնաժողովի անդամների 2/3-ը: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է: Եթե վերահսկող մարմինը վերահսկիչն է, ապա նա որոշումներ է ընդունում միանձնյա:

7.13 Վերահսկիչ հանձնաժողովը կարող է Կազմակերպության նախագահից և այլ աշխատողներից պահանջել Կազմակերպության գործունեությանն առնչվող ցանկացած տվյալներ և հաշվետվություն:

7.14 Վերահսկիչ հանձնաժողովը պարտավոր է հաշվետվություն ներկայացնել Ժողովին՝ Կազմակերպության գործունեության, հաշվեկշռի, գույքի պահպանման և այլ ամփոփ տվյալների ստուգման արդյունքների մասին:

8.ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ,ԳՈՅԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1 Կազմակերպության գույքը հանդիսանում է Կազմակերպության սեփականությունը:

8.2 Կազմակերպությունը որպես սեփականություն կարող է ունենալ անշարժ գույք, տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, դրամական միջոցներ, արժեթղթեր և օրենքով չարգելված այլ գույք: Կազմակերպության անդամը նրա սեփականության նկատմամբ բաժնային իրավունք չունի:

8.3 Կազմակերպության սեփականության գոյացման աղբյուրներ կարող են լինել՝

- Կազմակերպության անդամների մուտքի վճարները, անդամավճարները, դրամական և նյութական ներդրումները,
- բանկային հիմնարկներից ստացված վարկերը,
- դրամաշնորհները,
- բարեգործական ներդրումները, քաղաքացիների և կազմակերպությունների նվիրատվությունները,
- հովանավորներից /տեղական և օտարերկրյա/ ստացված գումարները
- Կազմակերպության կողմից հիմնադրված տնտեսական ընկերությունների կողմից փոխանցված գումարները,
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ մուտքերը:

8.4 Կազմակերպության սեփականությունը գտնվում է Հայասատանի Հանրապետության պաշտպանության ներքո:

8.5 Կազմակերպության սեփականությունը կարող է բռնագանձվել միայն դատարանի կողմից՝ օրենքով սահմանված կարգով:

8.6 Կազմակերպության միջոցները կարող են օգտագործվել միայն կազմակերպչական ծախսերի և կանոնադրությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրականացման համար:

9.ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

9.1 Կազմակերպությունը կարող է լուծարվել Ժողովի կամ դատարանի որոշմամբ:
Ժողովը կազմավորում է լուծարային հանձնաժողով և օրենքով նախատեսված կարգով սահմանում լուծարման կարգն ու ժամկետները:

9.2 Կազմակերպության լուծարման ավարտին լուծարային հանձնաժողովը, պարտադիր վճարումներն իրականացնելուց հետո մնացած գույքը, Ժողովի որոշմամբ սահմանված կարգով, օգտագործում է Կազմակերպության կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար, իսկ, եթե դա հնարավոր չէ, փոխանցում է պետական բյուջե:

9.3 Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել Ժողովի որոշմամբ կամ օրենքով սահմանված դեպքերում դատարանի որոշմամբ՝օրենքով սահմանված կարգով:

կազմված է 10.10. 2011թ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Ինտերնետ հանրություն»

հասարակական կազմակերպության

ընդհանուր ժողովի որոշմամբ

«10 » 10 . 2011թ.

Գործադիր տնօրեն Ս.Ներսիսյան

ՏՊԱԳՐՎԱԾ Է ԵՐԿՈՒ ՕՐԻՆԱԿԻՑ

ՕՐԻՆԱԿ 1

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի

կենտրոնական մարմնի կողմից

« 30» 03 2009թ.

Գրանցման N 211.171.05016

Վկայականի N 03Ա084495

Հարկ վճարողի հաշվառման համարը՝ 00004302

30.03.2009թ.կանոնադրության

թիվ 001-3 փոփոխությունը գրանցված է ՀՀ

Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի

կենտրոնական մարմնի կողմից

«06» 12 2011թ.

Պետական ռեգիստրի ղեկավար՝

Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«ԻՆՏԵՐՆԵՏ ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆ»

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

/փոփոխություն և լրացում/

2011թ.-Երևան

«Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության 30.03.2009թ. գրանցված նոր խմբագրությամբ կանոնադրության (գրանցման համարը՝ 211.171.05016, վկայականի համարը՝03Ա084495) փոփոխություն և լրացում

1.Կազմակերպության 30.03.2009թ. գրանցված նոր խմբագրությամբ կանոնադրության 7.9 կետը ձևակերպել հետևյալ նոր խմբագրությամբ ՝

«7.9 Կազմակերպության նախագահը՝

- ղեկավարում է Վարչության աշխատանքները և վարում է նրա նիստերը.
- արձակում է հրամաններ.
- վարչության հաստատմանն է ներկայացնում աշխատակազմի հաստիքացուցակը.
- ձեռք է բերում, տիրապետում, օգտագործում, տնօրինում, օտարում և դուրս գրում Կազմակերպության ՝ մինչև մեկ միլիոն դրամ արժողության գույքը.

Կազմակերպության գործադիր տնօրենը նշանակվում է Կազմակերպության Վարչության կողմից:

Գործադիր տնօրենը.

- պատասխանատու է Կազմակերպության ֆինանսական գործունեության համար.
- առանց լիազորագրի հանդես է գալիս Կազմակերպության անունից, տալիս է լիազորագրեր.
- օրենքով սահմանված կարգով կնքում է գործարքներ, ստորագրում է պայմանագրեր, ֆինանսական փաստաթղթեր, բացում բանկային հաշիվներ:

Գործադիր տնօրենի առանձին իրավունքներ և պարտականություններ սահմանվում են Կազմակերպության նախագահի հետ կնքված պայմանագրով:Ֆինանսական խախտումների համար Կազմակերպության գործադիր տնօրենը կրում է անձնական պատասխանատվություն

Կազմակերպության փոխնախագահը/փոխնախագահներ/ ընտրվում է ժողովի կողմից 2 տարի ժամանակով և փոխարինում է /են/ նախագահին վերջինիս բացակայության ժամանակ»:

2.Սույն փոփոխությունը հանդիսանում է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կենտրոնական մարմնի կողմից 30.03.2009թ. գրանցված նոր խմբագրությամբ կանոնադրության անբաժանելի մասը:

կազմված է 27.02. 2012թ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Ինտերնետ հանրություն»

հասարակական կազմակերպության

ընդհանուր ժողովի որոշմամբ

«27» 02. 2013թ.

Գործադիր տնօրեն՝

Արման Ներսիսյան

ՏՊԱԳՐՎԱԾ Է ԵՐԿՈՒ ՕՐԻՆԱԿԻՑ
ՕՐԻՆԱԿ 1

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ Իրավաբանական անձանց պետական

ռեգիստրի կենտրոնական մարնի կողմից

«30» 03 2009թ.

Գրանցման N 211.190.05016

Վկայականի N 03Ա084495

Հարկ վճարողի հաշվառման համարը՝ 00004302

30.03.2009թ. գրանցված կանոնադրության

թիվ 002-3 փոփոխությունը գրանցված է

Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի

կենտրոնական մարմնի կողմից

«22» 03 2013թ.

Պետական ռեգիստրի գործակալության պետ

Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«ԻՆՏԵՐՆԵՏ ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆ»

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

/փոփոխություն և լրացում/

2013թ.-Երևան

«Ինտերնետ հանրություն»
հասարակական կազմակերպության 30.03.2009թ. գրանցված նոր խմբագրությամբ
կանոնադրության փոփոխություն և լրացում

Կազմակերպության 30.03.2009թ. ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից /գրանցման համարը՝ 211.171.05016, վկայականի համարը՝ 03Ա084495/ գրանցված կանոնադրության 1.8-րդ կետը ձևակերպել հետևյալ նոր խմբագրությամբ.

«1.8 Կազմակերպության գտնվելու վայրն է . ՀՀ, ք.Երևան-0012, Ա.Խաչատրյան 17, բն. 3:

Սույն փոփոխությունը և լրացումը հանդիսանում է կազմակերպության 30.03.2009թ. ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կենտրոնական մարմնի կողմից գրանցված կանոնադրության անբաժանելի մասը: